# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ ՂԵԿԱՎԱՐ

## Հ Ր Ա Մ Ա Ն

01 օգոստոսի 2024 թվականի N 1848 -Ա

**Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի 2024 թվականի մարտի 15-ի N 601-Ա հրամանը ուժը կորցրած ճանաչելու մասին**

Ղեկավարվելով «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի 56-րդ հոդվածի 4-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի դեկտեմբերի 19-ի N 1940-Լ որոշման հավելվածի 19-րդ կետի 7-րդ ենթակետով, հիմք ընդունելով Վրաստանում արձանագրված մանր եղջերավորների ժանտախտ և ծաղիկ հիվանդության վերացման մասին Կենդանիների առողջության համաշխարհային կազմակերպության (OIE) հաղորդագրությունը՝

*Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝*

1. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի՝ 2024 թվականի մարտի 15-ի «Ներմուծումը ժամանակավորապես չթույլատրելու և Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի՝ 2024 թվականի մարտի 05-ի N 464-Ա հրամանը ուժը կորցրած ճանաչելու մասին» 601-Ա հրամանը:

Ա. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ